Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-131[1]-24.10.2012-ՊԱ-010/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի դեկտեմբերի 3-ի ՀՕ-94 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 3-րդ մասի ա) կետը «տեղաբաշխման մասին» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետում ներկայացված տեղեկությունների» բառերով:

Հոդված 2. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ի մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր «ե» կետով.

«ե) արտակարգ իրավիճակների կանխման կամ դրանց առաջացման դեպքում հնարավոր հետեւանքների նվազեցման ու վերացման, փրկարարական եւ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման, մարդասիրական օգնության ցուցաբերման համար նախատեսված արագ արձագանքման պաշարի մասին տեղեկությունները:»

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓՈԹԵՐԹ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Պետական նյութական պահուստի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ առաջարկությունների

ՀՀ	Առաջարկության հեղինակը,	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակա-ցություն	Կատարված փոփոխությունները
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 4-րդ և 5-րդ հոդվածներն միավորել մեկ հոդվածի ներքո:	Ընդունվել է:	Նախագծի 4-րդ և 5-րդ հոդվածները ներառվել են 4-րդ հոդվածում՝ 1-ին և 2-րդ մասերի տեսքով: